



# Ազդարարության Trumpet's Sound **փող**

54-րդ ՏԱՐԻ, ԱԽՏՐԱԼԻԱ  
ՆՈՅՏԱԲԵՐ - ԴԵԿՏԵՄԲԵՐ 2023



«ԱԶԳԱՐԱՐՈՒԹԵԱՆ ՓՈՎ»  
երկամսյա հոգեուր թերթ

Պատասխանատու խմբագիր՝  
հովիւ Հրաչ Գոյունեան

ACM AUSTRALIA  
PO BOX 1593,  
CHATSWOOD NSW 2057  
EMAIL: hkiujian@acmaust.org  
URL: www.acmaust.org



### Աղօթքի կէտեր

Այս տարուայ աւարտին շնորհակալու-  
թիւն կը յայտնենք Տիրոջը՝

- Իր բոլոր բարութեան համար,
- մարդկութեան փրկութեան համար  
Իր Որդին աշխարհ զրկելու համար,
- օրհնուած տարուայ համար, որու  
ընթացքին առաքելութիւնը բազմա-  
թիւ եկեղեցիներու, գիւղերու եւ  
դպրոցներու մէջ գործունէութիւն  
ծաւալեց,
- Աւետարանը պետական դպրոցնե-  
րուն մէջ տարածելու արտօնութեան  
համար,
- կարիքաւորներուն, ծերանոցներու  
շահառուներուն եւ փախստական-  
ներուն քարոզելու բաց դռներու  
համար,
- ձեզ համար, որ այս տարուայ  
ընթացքին նիւթապէս եւ աղօթքով  
աջակցեցիք մեզ:

*ACM-ի բոլոր ծառայողներու անունէն  
կը շնորհատրենք Սուրբ Ծնունդը եւ  
օրհնեալ տարի մը կը մաղթենք բոլորիդ:*

### Բովանդակութիւն

Բարի Զովիւր . . . . . **3**  
*Հովիւ Հրաչ Գոյունեան*

Սաղմոս 5 . . . . . **4**  
*Տոն Սրբո՛ր*

Տէրը մեր Զովիւր . . . . . **6**  
*Վահիկ Նոր. Հաղարեան*

Անցեա՛լ, թե՛ ապագայ . . . . . **10**  
*Նէյլ Պուրման*

Յոբ (2) . . . . . **12**  
*Տոն Սրբո՛ր*

Ոչ թէ իմ կամքս Տէ՛ր, այլ՝ Քու կամքդ . **15**  
*ACM*

Կազմի նկարը՝ աւազէ մարդ, Աստրալիա  
Shutterstock:

**Սոյն թերթի ծախսերը կը հոգացուի հաւատացեալներու սրտաբուխ նուէրներով:**

## Բարի Հովիւը

**«Ես եմ բարի հովիւը, բարի հովիւը իր կեանքը  
նշխարներուն համար կը դնէ» (Յովհ. 10:11)**

**Տ**արիներ առաջ մինչ Հայաստանի մէջ կը գտնուէի, ուզեցի ոչխարներու հովիւի մը հետ հանդիպիլ, քանի որ մի քանի հարցումներ ունէի տալու: Հայաստանի մէջ ոչխար պահող շատ հովիւներ կան, սակայն ժամանակս կը վերջանար եւ տակաւին չէի կրցած հանդիպիլ հովիւի մը: Վերջապէս գիտի մը մէջով մեքենայով անցնելու ժամանակ նկատեցի բլուրի գագաթին հովիւ մը՝ իր ոչխարներու հետ: Վարորդին խնդրեցի կանգ առնել, եւ սկսեցի բարձրանալ բլուրը: Հովիւը զարմացած ինծի կը նայէր, թէ ինչու այս անձանօթը կը շտապէ դէպի իրեն: Ողջունեցի զինք՝ ըսելով, թէ երկու հարց ունիմ իրեն տալու: Աստուածաշունչը կը խօսի Բարի Հովիւի մասին, եւ ես կ'ուզէի իմանալ, թէ արդեօք այս հովիւը բարի<sup>օ</sup> էր, եւ եթէ այո, ապա ի՞նչը զինք բարի հովիւ կը դարձնէ: Որոշ ժամանակ մտածելէն ետք ան պատասխանեց ըսելով, թէ ինքը բարի հովիւ մըն է: Իր հօտի ոչ բոլոր ոչխարները իր սեփականութիւնն էր: Ոմանք կը պատկանէին իր դրացիներուն, բայց ան ըսաւ, թէ անոնց մասին ալ հոգ կը տանի այնպէս, ինչպէս իր սեփական ոչխարներուն: Ան կը կարծէր, թէ իր այդ արարքը իրեն բարի հովիւ կը դարձնէր: Շնորհակալութիւն յայտնեցի իրեն, բայց նորէն հարցում մը տուի: Ըսի թէ, Աստուածաշունչը նաեւ կ'ըսէ, թէ բարի հովիւը իր կեանքը ոչխարներուն համար կը դնէ: Ան բարձր ծիծաղեց ու ըսաւ. «Ո՛չ, ես այդպէս չեմ ըներ: Ես երբեք նման բան չեմ ըներ իմ ոչխարներուս համար»:

Միայն Յիսուսն է Բարի Հովիւը: Ան եկաւ կորսուածին փնտռելու ու փրկելու: Մեծարե՛ զինք: Ան Իր կեանքը տուաւ, որպէսզի փրկուինք: Խաչին վրայ Ան ցոյց տուաւ Իր սերը, եւ մինչ միասին կը տօնենք Սբ. Ծնունդը, մենք ալ կը խորհիմք այն մեծ զոհաբերութեան մասին, որ Ան կատարեց մեզ նման մեղաւորներու փրկութեան համար: Յիշէ՛ք, որ փրկութեան այս դուռը լայն բաց է նաեւ ձեզ համար: Եկէ՛ք Յիսուսի մօտ, եկէ՛ք հիմա:

Հ.Գ.

## Սաղմոս 5

5-րդ Սաղմոսը Տիրոջ վստահող անձի խորհրդածութիւն է: Սաղմոսերգիչը կը մտածէ Աստուծոյ որոշ առաքիւնութիւններու շուրջ ու կը խնդրէ Տիրոջ դատաստանը ամբարիշտներու վրայ եւ Անոր պաշտպանութիւնը բոլոր անոնց համար, ովքեր Իրեն կը վստահին:

Դաւիթը այս Սաղմոսը շարադրեց երրայական բանաստեղծութեան բնորոշ ձեով: Սկզբնական միտքը կը կրկնուի տարբեր բառերով՝ յաճախ այդ միտքը ինչ-որ կերպ զարգացնելով: Ուստի Դաւիթը խնդրեց Տիրոջը, որ ականջ դնէ իր խօսքերուն եւ լսէ իր աղաղակի ձայնը: Ան կ'ուզէր, որ Տէրը հաշուի առնէր իր խնդրանքը երկու պատճառներով. Առաջին՝ Տէրը իր Թագաւորն ու Աստուածն է: Ան Տիրոջը կ'աղօթէ: Ան կը յայտարարէ, որ Աստուած առաւօտուն պիտի լսէ իր ձայնը, ան իր խնդրանքները պիտի ներկայացնէ Իրեն նախքան օրը սկսիլը: Իր խօսքերը Տիրոջը ուղղուած են, եւ Դաւիթը ակնկալութեամբ պիտի սպասէր Անոր պատասխանին:

Սա է այն մարդու կեցուածքը, ով ամբողջութեամբ Տիրոջը կը վստահի: Սա Աստուծոյ հանդէպ մշտական վստահութեան վերաբերմունք է: Ամէն առաւօտ Դաւիթն աղօթքով իր ձայնը կը բարձրացնէր առ Աստուած՝ ակնկալելով, որ Ան պիտի ուղղորդէ իր քայլերը:

Երկրորդ՝ 4-6-րդ համարներուն մէջ Դաւիթը կը նկարագրէ մեր Աստուծոյ առաքիւնութիւնները: Ան չի հաճեմար մարդկանց չար գործերով, Իր մէջ չարիք չի բնակիր: Իրականութեան մէջ չարիքը չի կրնար ապրիլ Իր ներկայութեան մէջ: Հետեւաբար անոնք, որոնք ամբարտաւան են ու կը պարծեման իրենց մեղքերով պիտի չկրնան կենալ Իր առջեւ: Թէև Աստուած կը սիրէ բոլոր մարդկանց, Ան կը զգուի անոնց արիւնահեղութենէն եւ խարդախ ճանապարհներէն: Անօրէնութիւն գործողները կարող են միայն ակնկալել Տիրոջ դատաստանը, որով պիտի տապալուի անոնց բոլոր ծրագրերը:

Դաւիթը կը մտածէ Աստուծոյ ողորմութեան կամ սիրառատ բարութեան մասին: Այս բառը երբեմն թարգմանուած է, որպէս հաստատական սէր, եւ կը վերաբերի փոխադարձ յարաբերութենէն բխած վերա-

բերմունքին: Թագաւորի պարագային, այն կը դրսեւորուի իր հպատակներուն պաշտպանելու դիրքորոշմամբ: Աստուծոյ պարագային, այն կը դրսեւորուի աստուածային սիրոյ դիրքորոշմամբ, որուն մենք անարժան ենք: Դաւիթը Աստուծոյ տունը կրնար մտնել Աստուծոյ սիրոյ ու բարութեան առատութեամբ լցուած, ակնածանքով խոնարհելով Անոր առջեւ, խնդրելով Անոր առաջնորդութիւնը իրեն հակառակողներու առջեւ:

Աստուծոյ սիրառատ բարութեան շնորհիւ Դաւիթը կրնար խնդրել Տիրոջը, որ զինք Իր արդարութեամբ առաջնորդէ: Ան բազմաթիւ թշնամիներ ունէր, որոնք պիտի յարձակուէին իր վրայ. ան պաշտպանութեան կարիք ունէր:

Դաւիթն աղօթեց, որ Աստուած իր թշնամիներուն յանցաւոր հանէ, եւ որ անոնց ծրագիրները իրենց սեփական իմաստութեան մէջ ձախողուին: Տիրոջ դէմ անոնց ապատամբութեան պատճառով ան կը փափաքէր, որ անոնք Տիրոջ ներկայութենէն դուրս նետուին:

Դաւիթը նկարագրեց անօրէնութիւն գործողներուն՝ մարդկանց, որոնց սրտերը կործանման ճանապարհի վրայ են: Ոչ ոք չի կրնար վրստահիլ անոնց խօսքերուն. անոնց խօսքերուն մէջ հաւատարմութիւն չկայ: Անոնք պատրաստ են բոլորին ոչնչացնել, քանի որ անոնց կոկորդները բաց գերեզմաններ են: Իրենց նպատակներուն հասնելու համար կը շողոքորթեն մարդկանց:

Վերջին երկու համարներուն մէջ Դաւիթը կը վերադառնայ իր աղօթքի նիւթին, խնդրելով Տիրոջը, որ բոլոր անոնք որոնք կը վստահին Իրեն՝ ցնծութեան մէջ բնակին: Եթէ Աստուած պաշտպանէ իրենց, անոնք իսկապէս ուրախութիւնէն կրնան գոռալ: Քանի որ անոնք Տիրոջ անունը կը սիրեն, անոնք պիտի ուրախանան Իրմով: Արդարները կրնան մխիթարուիլ, քանի որ Աստուած կ'օրհնէ անոնց եւ կը շրջապատէ զիրենք Իր բարեհաճութեամբ:

Տոն Սթորմը



## Տէրը մեր Հովիւը

### Սաղմոս 23

**Ս**աղմոս 23-ին մէջ Աստուած պատկերացուած է որպէս հովիւ, եւ Իր ժողովուրդը՝ որպէս ոչխարներ: Այս Սաղմոսը գրուած է ոչխարի տեսանկիւնէն:

Դաւիթ քագաւոր կը նկարագրէ զԱստուած որպէս Տէր եւ որպէս հովիւ: Յիսուս ըսաւ. «Ես եմ բարի հովիւր որ կը ճանչնամ իմիններս եւ կը ճանչցուիմ իմիններէս»: Դուն Յիսուսը կը ճանչնա՞ս իբր քու անձնական Փրկիչդ, Յիսուս քեզ կը ճանչնա՞յ իբրեւ Իրը: Որո՞ւ կը վստահիս, երբ կեանքդ կը սկսի ալեկոծիլ, երբ անորոշութիւնները շատնան, որո՞ւ կ'երթաս, կը խնդրե՞ս որ Ան կեանքդ կառավարէ բոլոր մանրամասնութիւններուն մէջ, որովհետեւ միայն այն ժամանակ կրնաս խոր վստահութեամբ, որոշ գիտակցութեամբ եւ հաստատ հաւատքով ըսել. «Տէրը իմ հովիւս է, ես բանի մը կարօտութիւն պիտի չունենամ, որովհետեւ զիս խոտաւէտ արօտներու մէջ կը պառկեցնէ, հանդարտ ջուրերու քով ինձի կ'առաջնորդէ»:

Ոչխարը խելացի անասուն մը չի նկատուիր, այլ՝ անմիտ, եւ այս պատճառով երբեմն շատ պզտիկ բանէ կը վախնայ, տակնուվրայ կ'ըլլայ եւ իր հօտը խլրտումի կ'ենթարկէ: Հովիւր կը բռնէ վախցած ոչխարը, փափկօրէն եւ սեղմօրէն իր ոտքին տակ կը դնէ խոտին վրայ եւ կամաց կամաց վերցնելով կը հանդարտեցնէ զինք: Դաւիթ ինք ալ հովիւ ըլլալով՝ կը յիշէ այս տեսարանը եւ կ'ըսէ թէ Տէրն ալ նոյն ձեւով կը հանդարտեցնէ զինք: Մեր առօրեայ կեանքերուն մէջ ալ շատ մը անցողարձներ մեզ կը խանգարեն ու կը կորսնցնենք մեր հանգիստը: Դիշդ այս պարագաներուն մէջ - ինչպէս անգործութիւն, հիւանդութիւն, ցաւ - Տէրը կը բռնէ մեզ ու հանգչիլ կուտայ մեզի: Ոչխարը նաեւ կը վախնայ վազող ջուրերէն. մենք նաեւ երբ կեանքի հոսանքին առջեւ գտնուինք՝ կը դժկամինք: Կրնա՞ս յիշել ինչ պատահեցաւ վերջերս երբ կեանքի արագավազ հոսանքին առջեւ գտնուեցար եւ Տէրը հանդարտեցուց: Տէրը հետաքրքրուած է մեր ֆիզիքական եւ հոգեկան վիճակով, զգացական բարեկեցութեամբ, հանդարտութեամբ եւ խաղաղութեամբ:

Երբեմն, ոչխարները արածելու ժամանակ կը հեռանան ու կը կորսուին. հովիւը ձգելով մնացած ոչխարները փարախին մէջ, կ'երթայ մացառներուն, փուշերուն մէջ բռնուած ոչխարը կ'ազատէ, իր ուսին վրայ կը դնէ՝ սրտին մօտ, ու տուն կը վերադարձնէ, այսպիսով ոչխարին վտանգուած կեանքը կը նորոգէ: Մենք ալ կը մոլորինք շատ անգամ: Մենք ալ աշխարհի եռուզեռին, հոսանքին մէջ կանանչ խոտերու ետեւէն երթալով, աստիճանաբար հոգեւոր վիճակէն կը հեռանանք, կը կորսուինք. մեր արժէքները, հաւատամքները հետզհետէ կը նուաղին մեր կեանքերուն մէջ: Եւ Տէրը հաւատարիմ Հովիւ ըլլալով՝ կը փնտռէ ու կը գտնէ մեզ, ուսին վրայ կը դնէ, մեր վտանգուած կեանքը կը նորոգէ, մեր հոգին կը նորոգէ: «Իր անուանը համար արդարութեան ճամբաներուն մէջ կ'առաջնորդէ զիս»: Հովիւները երբ ոչխարները բլուրներու վրայ կը տանին՝ լաւ զիտեն այդ ճամբաները, լաւ զիտեն վտանգաւորն ու շիտակ ճամբան, որքան խայտառակ պիտի ըլլար հովիւին անունը եթէ հովիւը սխալ ճամբէ առաջնորդէր իր ոչխարները, ո՞վ պիտի վստահէր անոր յաջորդ անգամ, ուրեմն հովիւները լաւ կը սերտեն ճամբաները: Տէրն ալ Իր անուանը համար արդարութեան ճամբաներուն մէջ կ'առաջնորդէ մեզ, որչափ որ Իր անունը պատուատր ու անարատ է, այնքանով վստահելի եւ հաստատ են անոր խոստումներն ու ճամբաները: Դուն կը հետեւի՞ս Աստուծոյ ճամբաներուն: Յիսուս ըսաւ. «Ես իմ ճամբան, ճշմարտութիւնը եւ կեանքը, մէկը Հօրը քով չգար եթէ ոչ ինձմով»: Աստուծոյ գալու միակ ճամբան Յիսուս է, եթէ դուն չես եկած, մոլորած ես, թող Տէրը կանչէ քեզ. բարի լուրը այն է՝ որ Յիսուս կը կանչէ:

Երբ հովիւը ոչխարները դէպի բարձունքները կը հանէ, վտանգաւոր ճամբաներէ անցնելու վախը կայ: Տէրը երբ մեր առջեւէն կ'երթայ թէւ վախ ու տարակոյս մեզ պատեն ու մահուան շուքի ձորին մէջէն անցնինք՝ չարէն չվախնանք: Երբեմն Տէրն ալ մեզ կը դրկէ այնպիսի առաքելութիւններու որոնց ընթացքին նեղութիւններէ եւ դժուարութիւններէ անցնելով է որ մեր հաւատքին փորձառութիւնը կ'ընդլայնի, կը խորանայ եւ հաւատքի կեանքի բարձունքներուն կրնանք հասնիլ: Մենք ալ որպէս ոչխարներ կրնանք քաջաբար եւ յուսալից կերպով հետեւիլ մեր առաջնորդ Հովիւին: Դուն Յիսուսի կը նայի՞ս առօրեայիդ մէջ: Մեր միակ ջանքը Տէրը հաճեցնել թող ըլլայ: Չյուսահատինք, որովհետեւ Տէրը մեզի հետ է: Աստուծոյ Խօսքը կ'ըսէ, որ արդարին նեղութիւնները

շատ են, բայց Տէրը բոլորէն գայն կը փրկէ, կ'ազատէ: Թող Իր ցուպը ու գաւազանը մեզ մխիթարեն:

Տուպը կը գործածուէր վայրի գազաններ ջախջախելու համար. ան՝ հովիւին զօրութիւնը կը ներկայացնէր, իսկ գաւազանը՝ հովիւին իշխանութիւնը: Երբ մոլորէին, գաւազանին կտր ծայրը ոչխարին վիզը կ'անցնէր ու պարտադրանքով ետ կը բերէր: Բարի Հովիւր Իր ցուպով եւ գաւազանով մեր թշնամիները կը ճգմէ, իր զօրութեամբը, իշխանութեամբը, առաջնորդութեամբը, Իր քով կը քաշէ մեզ եւ շիտակ ճամբուն մէջ կ'առաջնորդէ: Աստուծոյ զօրութեան ներքեւ՝ հաւատացեալը կրնայ հանգչիլ, վտանգէ ապահով եւ պատասպար զգալ: Առակացի մէջ կ'ըսէ. «Քու բոլոր սրտովդ Տիրոջը ապաւինէ, քու իմաստութեանդ մի վստահիր, ամէն ճամբաներուդ մէջ զանիկա ճանչցիր ու անիկա քու շաւիղներդ պիտի ուղղէ»: Ոչխարը երբ իյնայ, միայն կրնայ պոռալ, չի մտածեր փախչելու մասին, ոչխարը նաեւ կերպ մը չունի ինքզինք մաքրելու: Մարդկութեան պարագան ալ նոյնն է, մենք մեր ջանքերով, բարի գործերով չենք կրնար արդարանալ Աստուծոյ առջեւ, միակ ձեւը բարի Հովիւին շնորհքով է, որ կը մաքրուինք եւ սուրբ կը նկատուինք Աստուծոյ աչքերուն առջեւ:

Խղճամիտ հովիւը միշտ կաւէ բաժակը մինչեւ բերան կը լեցնէ ջրհորէն քաշուած ջուրով որ ոչխարը կարենայ խմել: Նաեւ հովիւը երբ դաշտ երթայ՝ ոչխարները չ'արձակած՝ իողին շիշը կ'առնէ ու իտ կը դնէ օձի ծակերուն մուտքին, որ օձը չկարենայ դուրս գալ եւ հոտէն ետ երթայ: Իսկ ոչխարներուն բերանն ալ իտով կը ծածկէ որ օձը չմօտենայ անոնց: Այսպիսով, ապահովութեան մէջ կը պահէ ոչխարները: Տէրն ալ մեզ Իր Սուրբ Հոգիովը կ'օժէ, թէւ վտանգաւոր ու նոր ու անծանօթ պարագաներու մէջ գտնուինք, Տէրը հոգեւոր փորձառութեան սեղան մը կը պատրաստէ ուր մեր հոգեւոր փորձառութիւնը կը խորանայ Իր առաջնորդութեան ներքեւ:

Ի՞նչ է մտահոգիչ պարագադ: Նոր եկեղեցի՞, քաղա՞ք, շրջանա՞կ, ընտանի՞ք: Մի՛ վախճար, քաջալերուէ՛, որովհետեւ Յիսուս Իր աշակերտներուն ու բոլոր Իր հետեւորդներուն համար այսպէս աղօթեց, «Չեմ աղաչէր, որ զանոնք վերցնես աշխարհէն, հասպա զանոնք պահես չարէն»: Տէրը մեզ չարէն կը կը պահէ Իր հրեշտակներով: Մեր Երկնաւոր Հայրը մեր բաժակը միշտ լեցուն կը պահէ, առատութեամբ



կուտայ եւ ոչ թէ խնայողութեամբ: Կրնա՞ս երեւակայել, թէ Աստուած ինչե՛ր կրնայ տալ քեզի: Աստուած քու խորհածե՛ղ ատելին կրնայ ընել թէ՛ ֆիզիքապէս, թէ՛ նիւթապէս, թէ՛ հոգևորապէս, թէ՛ մտային եւ թէ՛ զգացական գետնի վրայ: Աստուած կը լեցնէ Իր զաւակներուն պէտքը առատօրէն:

Հօտին ետեւէն հսկիչ պահապան շուներ կը պտըտին, որ չըլլայ թէ զազաններ յարձակին: Ողորմութիւնը եւ բարերարութիւնն ալ հաւատացեալներուն պահպանիչներն են: Աստուած Իր բարութեամբ ու ողորմածութեամբ կը վարուի մեր հետ, ոչ դառնութեամբ կամ վրէժ-խընդրութեամբ, այլ՝ սիրով: Անառակ որդին տուն դարձաւ, որովհետեւ գիտակցեցաւ իր հօր առատ սիրոյն: Յիսուս ըսաւ. «Ես ամէն օր ձեզի հետ եմ մինչեւ աշխարհի վերջը»:

Դաւիթ փափաքեցաւ Իր Տիրոջ ներկայութեան մէջ ապրիլ իր բոլոր օրերուն մէջ: Ես Եւ դուն Տէրը գիտենք, ու Ինք մեզ կը ճանչնայ եւ յաւիտեան Տիրոջը առջեւ պիտի ըլլանք: Եթէ այսօր աչքերդ փակես եւ այս աշխարհէն մեկնիս, վստա՞հ ես որ Իր ներկայութեան մէջ պիտի գտնուիս, կրնա՞ս ըսել. «Ո՛վ Տէր, Զու գիրկիդ մէջ առ զիս»: Ե՞րբ էր վերջին անգամ, որ զգացիր Տիրոջ բարերարութիւնը, ողորմութիւնը իբրեւ հսկիչ, պահպանիչ ուժը քու ետեւէդ. ե՞րբ էր որ վերջին անգամ անդրադարձար, թէ Տէրը քու կեանքիդ պէտքերը առատութեամբ կուտայ եւ քու բաժակդ խիստ լեցուն է: Ե՞րբ էր վերջին պարագան, որ Տէրը քեզ պառկեցուց ու հանդարտեցուց եւ քու պէտքդ հոգաց: Ե՞րբ էր վերջին անգամ, որ Տէրը քեզ Իր ուսին վրայ առաւ, Իր սրտին մօտ, ու տուն վերադարձուց: Փափաքս այն է որ Տէրը իւրաքանչիւրիս բաժինը ըլլայ, որպէս Բարի Հովիւ մը, երբ կեանքի անորոշութիւններուն առջեւ գտնուիմք կարենանք ըսել. «Տէրը իմ Բարի Հովիւս է, ես բանի մը կարօտութիւն պիտի չունենամ»:

Վահիկ եղբ. Հադադեան  
Քաղուած՝ «Հատընտիր հոգևոր պատգամներ» գիրքէն



## Անցեա՛լ, թէ՛ ապագայ

«Փափաքելով փափաքեցայ որ այս գատիկը ձեզի հետ ուտեմ իմ չարչարուելէս առաջ: Քանզի կ'ըսեմ ձեզի թէ ալ բնաւ ասկէ պիտի չուտեմ՝ մինչեւ Աստուծոյ թագաւորութեանը մէջ կատարուի» (Ղուկ. 22. 15-16)

Որքա՛ն տարօրինակ պէտք է, որ սա հնչած ըլլար տասներկուքի ականջին, երբ նստած էին Տէր Յիսուսի հետ՝ Չատիկի ընթրիքն ուտելու համար: Անոնք գիտէին, որ Չատիկը շատ տարիներ առաջ Աստուծոյ հրաշալի կերպով հրեայ ժողովուրդին Եգիպտոսի լուծէն եւ ստրկութիւնէն ազատելու յիշատակումն էր: Մովսէսը պատուիրած էր երբեք չմոռնալ այդ հզօր ազատագրումը: Ամէն տարի Չատիկի ընթրիքն այն ժամանակն էր, երբ ծերերն ու երիտասարդները միասին կը յիշէին, թէ ինչպէս Աստուած իրենց դուրս բերաւ Եգիպտոսէն, որպէսզի տանի դէպի Աւետալից երկիրը, որը խոստացած էր տալ Աբրահամին եւ անոր սերունդին:

Սակայն Տէր Յիսուսն այստեղ Չատիկի մասին կը խօսի, որպէս թէ ապագային կատարուելիք իրադարձութիւն մը եւ ոչ թէ անցեալի մէջ կատարուած դէպք մը: Անոնք հաւանաբար կը մտածէին. «Ինչպէ՞ս կատարել այս Չատիկը: Ի՞նչ է սա նշանակում: Արդեօ՞ք եւս մէկ ազատագրում պիտի ըլլայ ապագային»:

Անոնք դեռեւս չէին կրնար հասկնալ, որ Տէր Յիսուսի մահը շատ անելի հրաշալի, անելի տեսական եւ շատ անելի փառաւոր բան մը պիտի կատարէ, քան այն, ինչ անոնք կը յիշատակէին Չատիկի ժամանակ: Աւելի ուշ Պօղոսը գրեց. «Քրիստոս՝ մեր Չատիկը մեզի համար զոհուեցաւ» (Ա Կորնթ. 5:7), եւ շուտով անոնք պիտի տեսնէին Յիսուսի մահը, որը ժողովուրդին մեղքէն ու աշխարհէն պիտի ազատէր ու տանէր դէպի Աստուած: Այս մեծ ու յափտենական ազատագրումը կատարուեցաւ Չատիկին:

Չատիկի ընթրիքի ժամանակ Տէր Յիսուսը բաշխեց հացն ու զինին, որը յաճախ կը կոչենք Տիրոջ Սեղանը: Երբ կը յիշենք Չինք, մենք կը յիշենք Անոր, ով մահացաւ մեզ աշխարհէն ազատագրելու եւ հոգիով

մեզ «բարի երկիր» բերելու եւ Իր հետ հաղորդակցութեան մէջ մտցնելու համար: Մենք կը յիշենք, որ Ան մահացաւ մեր մեղքերուն համար: Առանց Քրիստոսի գոհաբերութեան փրկութիւնը չէր կատարուեր, բայց իրականութեան մէջ Չատիկի գոհը մեղքի պատարագ չէր: Այն եզակի գոհաբերութիւն էր, որը բաժնեց Իսրայէլին Եգիպտոսէն եւ հնարատր դարձուց անոնց վերադարձը դէպի այն երկիրը, որտեղ Աստուած ըսած էր, թէ այնտեղ պիտի բնակի անոնց մէջ:

Երբ Անոր սեղանի շուրջ մէկ հացը կը կիսենք, մենք կը յիշենք, որ Տէր Յիսուսը մահացաւ մեզի համար, որպէսզի հաղորդ ըլլանք Իր կեանքին (Յովհ. 12:24): Երբ բաժակէն կը խմենք, մենք կը յիշենք Անոր, որուն արիւնը կնքեց յաիտեանական ուխտ մը՝ խոստանալով միշտ ըլլալ մեզ հետ եւ օր մը հաւաքել մեզ Իր քով յաիտեանս յաիտենից:

Չատիկի ժամանակ հրեաները կը յիշէին Եգիպտոսէն ելլը: Տիրոջ սեղանի շուրջ մենք կը յիշենք աշխարհէն մեր ելլը, որը իրականացաւ մեր Տէր Յիսուսի մահուամբ ու յարութեամբ:

Նէյլ Պուքման



*Որդեակներս, այս բաները ձեզի կը գրեմ, որպէս զի մեղք չգործէք եւ եթէ մէկը մեղք գործելու ըլլայ, Եօրը քով բարեխօս ունիւք Յիսուս Քրիստոս արդարը: Անիկա մեր մեղքերուն քստութիւն է եւ ո՛չ միայն մերիններուն, հապա բոլոր աշխարհին ալ: Եթէ անոր պատուիրանքները պահենք, այն ատեն կը գիտնանք թէ զանիկա կը ձանձնանք:*

*Ան որ կ'ըսէ թէ Ես զանիկա ձանձցայ ու անոր պատուիրանքները չի պահեր, ստախօս է ու անոր մէջ ձշմարտութիւն չկայ: Բայց ան որ անոր խօսքը կը պահէ, իրաւցընէ անոր մէջ կատարեալ է Աստուծոյ սէրը ու ատով կը ձանձնանք թէ անոր մէջ ենք: Ան որ կ'ըսէ թէ «Անոր մէջ կը բնակի», այնպէս պէտք է քալէ՝ ինչպէս անիկա քալեց:*

**Ա Յովհ. 2:1-6**

## Յոբ (2)

### Յոբի մխիթարիչները

Յոբի ընկերներէն ոմանք լսեցին անոր պատահած չարիքի մասին եւ ճանապարհ ընկան զինք մխիթարելու համար: Թերեւս ոմանք մտածեն, թէ սատանան յատուկ ընտրեց Յոբի մխիթարողներուն, որպէսզի անոր կեանքը աւելի դժբախտացնէ: Նման միտքը ենթադրութիւն է, բայց գուցէ եւ հաւանական: Մենք գիտենք, որ սատանան չդիպչեց Յոբի կնոջը: Արդեօ՞ք ան հաշուի առաւ, որ կինը չունէր Յոբի հաւատքի ուժը, եւ հետեւաբար, կրնար զինք օգտագործել՝ Յոբին զԱստուած անհիծելու դրդելու մէջ: Մենք չենք գիտեր, սակայն կարող ենք վստահ ըլլալ, որ սատանան պիտի ընէ այն ամէնը, ինչ կրնայ ընել, որը իրեն պարտադրուած սահմաններուն մէջ է, եւ պիտի օգտագործէ ամէն հնարաւորութիւն մեր խնդիրները մեծցնելու, եւ եթէ հնարաւոր է՝ մեզ մեղք գործել տալու:

Լսելով Յոբի ծանր պատուհասի մասին, անոր ընկերները, հաւանաբար, բարի մտադրութեամբ ձեռնամուխ եղան զինք մխիթարելու: Բայց անոնք այնքա՛ն անօգնական եւ անկարեկից էին, որ մխիթարողի անուն ձեռք բերելու փոխարէն յուսահատեցնողի անուն ձեռք բերեցին, որ մինչեւ օրս ալ նման մարդկանց այդպէս կ'անուանենք, ըսելով՝ Յոբի ընկերներուն պէս կը խօսիս: Բայց ինչո՞ւ անոնք այդքան անօգնական էին:

Յոբի գրքին մէջ կը կարդանք անոնց համոզմունքներու եւ Յոբի հասցէին հնչած մեղադրանքներու մասին, որոնք երեք փուլերով կը ներկայացուին մեզի: Իրաքանչիւր ելոյթի մէջ Յոբի հասցէին հնչած մեղադրանքներն աւելի լուրջ ու սաստիկ կը դառնան: Մխիթարողներէն իրաքանչիւրը լիովին համոզուած էր, որ Յոբն այնքան լուրջ մեղք գործած էր, որ Աստուած զինք դատապարտած էր: Եղիփազը, ով առաջինը խօսեցաւ, սկիզբը զգուշութեամբ շարադրեց իր աստուածաբանութիւնը, բայց այնուամենայնիւ, հաստատ համոզուածութեամբ, որ եթէ ինչ-որ մէկը Յոբի պէս կը տառապի, ուրեմն հաստատ որ վատ բան ըրած է: Ան կը կարծէր, որ անմեղ մարդիկ տառապանքի չեն հանդիպիր:

Բաղդատն իր փաստարկներն աւելի առաջ տարաւ: Ան պնդեց, որ

Յոբի գաւակները մեղք գործած են, եւ Աստուած անոնց կը պատժէ իրենց մեղքերու համար: Քանի որ Աստուած չի մերժէր անարատ մարդուն, Յորը պէտք է մաքրուի եւ Աստուծոյ առջեւ ուղիղ ըլլայ, որպէսզի Աստուած ընդունէ զինք: Սոփարն աւելի անբարեացակամ էր: Ան կը մտածէր, թէ Յորը պէտք է աւելի շատ տառապի՝ պնդելով, որ Աստուած նոյնիսկ մոռցած է Յոբի գործած որոշ մեղքերը:

Ելոյթներու երկրորդ փուլին իրենց պնդումներու մէջ երեք այցելուներն աւելի ծայրայեղ կը դառնան: Եղիփազը ոչ միայն ենթադրեց, որ Յորը նման կերպով պատժուելու համար պէտք է, որ լուրջ մեղք գործած ըլլար, այլ նկարագրեց այն մարդու ճակատագիրը, ով իր բռունցքը կը թափահարէ Ամենակարողի դէմ: Նման մարդը պիտի կորսնցնէ իր ամբողջ հարստութիւնը եւ աւերակներու մէջ պիտի բնակի: Բաղդատը պատկերատու նկարագրեց անաստուածի ճակատագիրը՝ համոզուած ըլլալով, որ ամբարիշտներու ճրագը պիտի հանգչի ու սերունդ պիտի չունենայ, եւ անոնց անունը աշխարհէն պիտի կորսուի ու այլեւս չիշուին: Սոփարը կրկնեց իր համոզումները, որ ամբարիշտներուն աղետալի ճակատագիր կը սպասէ:

Ելոյթներու երրորդ փուլին միայն Եղիփազն ու Բաղդատը մասնակցեցին: Անոնք Յոբին մեղադրեցին այնպիսի բաներու մէջ, որոնք ան երեք չէր կատարած: Իրեն կը մեղադրէին մարդկանց հարստահարելու, այրիներուն դատարկաձեռն ճանապարհելու եւ այլ բաներու մէջ: Աստուած սատանային արդեն ըսած էր, որ Յոբի պէս կատարեալ մէկը չկայ ամբողջ աշխարհին մէջ, ան արդար, աստուածավախ եւ չարութենէ խուսափող մէկն էր:

Յոբի ընկերներէն իրաքանչիւրն իր սրտի խորքին մէջ ունէր այն համոզումները, որ Աստուծոյ հաճելի դառնալու համար մարդը պէտք է վարքի որոշակի չափանիշի հասնի: Այնուամենայնիւ, հաւանաբար արդարացի կ'ըլլայ ըսել, որ Յոբի ընկերները այս կեանքէն այն կողմ չէին մտածէր: Անոնք կը մտածէին, որ մարդը իր կատարած բարի գործերով կրնայ արդարանալ: Մակայն անոնք մէկ այլ լուրջ մոլորութիւն ալ ունէին: Անոնք Յոբին խորհուրդ տուին անարատ կեանքով ապրիլ, որպէսզի Աստուած օրհնէ իրեն: Բայց սա ճիշտ այն մեղադրանքն էր, որ սատանան նկարագրեց ըսելով, թէ Յորը Աստուծոյ կը ծառայէ այն օրհնութիւններու համար, որոնցով Աստուած օրհնած է իրեն: Միշտ չէ,

որ Աստուծոյ ծառայները բարեկեցիկ կեանք կունենան, քանի որ Աստուծոյ կը ծառայեն: Եթէ այդպէս ըլլար, ապա շատ մարդիկ սխալ պատճառով Աստուծոյ ծառայել կը սկսեին:

## Եղիուս

Յորի մխիթարողները չկրցան համոզել զինք, որ այս ամէնը իր մեղքի պատճառով է, եւ վերջապէս դադրեցան ապացուցելու իրենց տեսանկիւնը, որ ան հաստատ որ լուրջ մեղք մը գործած էր: Ճիշտ այս փուլին ներս մտաւ Եղիուսը: Երիտասարդական յանդգնութեամբ լեցուած երիտասարդը կը պնդէ, թէ գիտէ որն է խնդիրը: Այնուամենայնիւ, անոր որոշ ենթադրութիւնները սխալ էին, եւ հետեւաբար, միւս ընկերներու պէս անհետքութիւն կը խօսէր: Ան յայտնեց այն միտքը, որ Աստուած ցառով կը պատժէ մարդուն: Բայց մենք գիտենք, որ Յորը չէր պատժուեր իր գործած սխալներուն համար:

Այնուամենայնիւ, Եղիուսը ուշադրութիւն հրաւիրեց այն փաստի վրայ, որ Յորը իր հանդիպած դժուարութիւններուն համար զԱստուած կը մեղադրէր: Յորը կը խօսէր Աստուծոյ ճանապարհներու մասին, երբ իրականութեան մէջ չէր գիտեր, թէ Աստուած ինչ կ'ընէր: Սակայն Եղիուսը միւսներէն աւելի բան չէր գիտեր: Ան ոչինչ չէր գիտեր Աստուծոյ եւ սատանայի միջեւ եղած մրցակցութեան եւ այն ծայրայեղ ճնշման մասին, որուն բախուած էր Յորը:

Բացի այն, որ Եղիուսը ծանօթ չէր բոլոր փաստերուն, ան նոյնքան մեղաւոր էր, որքան միւսները՝ մեղադրելով Յորին այնպիսի խօսքերու մէջ, որ ան չէր ըսած: Յորը երբեք չըսաւ, որ ինքը մաքուր ու առանց յանցանքի է: Այն, ինչ կը պնդէր ամբողջ ընթացքին, այն էր, որ ինքը մեղք չէ գործած, որով նման ծանր պատժի արժանացաւ:

Եղիուսի եւ Յորի մխիթարողներու միջեւ տարբերութիւններ կային: Ան միւսներուն պէս չըսաւ, թէ եթէ Յորը ապաշխարէ, ապա Աստուած իրեն հարստութեամբ կ'օրհնէ: Եղիուսը Աստուծոյ զօրութեան մասին խօսեցաւ. «Ահա Աստուած Իր զօրութիւնովը բարձրացեալ է. ո՞վ կըրնայ անոր պէս տրվեցնել» (Յոր 36:22):

Արդեօ՞ք կարող ենք պատկերացնել Յորի փորձառած դժուարութիւնները: Քիչ են այն մարդիկ, որոնք երբեւէ բախուած են սատանայի հակառակութեան, ինչպէս Յոր հանդիպեց: Նման պահերու մէջ Աստու-

ծոյ հանդէպ մեր վստահութիւնը ծանր քննութեան կ'ենթարկուի: Ի՞նչ կրնանք ընել: Մենք պէտք է Աստուծոյ նախինք, Անոր աջակցող շնորհքը խնդրենք եւ հանգստանանք այն վստահութեան մէջ, որ մեզ մարդկային փորձութենէն զատ ուրիշ բան չէ պատահած (Ա Կորնթ. 10:13):

Տոն Սթորմը  
(Շարունակելի)

## **Ոչ թէ իմ կանքս Տէ՛ր, այլ՝ Քու կանքդ**

**Յ**ետադարձ հայեացք նետելով կը տեսնենք, թէ ինչպէ՛ս Տէրը առաջնորդեց մեզ: Մենք կը տեսնենք, թէ ով է վերահսկողը, ղեկավարողն ու առաջնորդողը: 2024-ը մտնելով, ACM-ը կը դառնայ 26 տարեկան: Մենք մուտք կը գործենք դէպի անորոշութիւն, բայց Տէրը շնորհալի է:

Մեր առաքելութիւնը աղքատներուն Աւետարանը հասցնելն է: Մեր մտքի ծայրէն երբեք չէր անցնէր, որ օր մը շուրջ 120,000 արցախահայ Քրիստոսի կարիքը պիտի ունենար, որպէս փախստական: Սա մեծ բեռ մը եղաւ բոլորիս համար, յատկապէս Հայաստանի մէջ գտնուող մեր գործընկերներու համար, ովքեր կարիքատուր մարդկանց հագուստ եւ սնունդ մատակարարեցին, կացարան եւ խորհրդատուութիւն տրամադրեցին: Անոնք Աւետարանը հասցուցին բազմաթիւ տեղահանուած երեխաներու: Ընտանիքներու մեծ մասը պատերազմի մէջ կորսնցուցած հարազատներ ունէին:

Իրավիճակը ծանր է, բայց Տէրը կը վերահսկէ ամէն բան: Ան կը դիպչի շատ սրտերու, կը սրբէ շատ արցունքներ եւ Իր Անձը կը յայտնէ շատերուն: Չեր աղօթքները կարեւոր են մեզ համար: Մենք կարիք ունինք իմաստութեան եւ Սուրբ Հոգիի առաջնորդութեան:

Եթէ Տէրը կ'առաջնորդէ ձեզ միանալու մեր միսիոներական խումբին, 2024 թուականի սեպտեմբերին, ապա կը խնդրենք մեզ հետ կապ հաստատել [info@acmaust.org](mailto:info@acmaust.org) հասցէով:

ACM



*Արցախահայ հասարակացիներ*



*Մանկական ծառայություն (Կիւմրի)*